ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ (ԱԲՈՐՏ) ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ընտանիքի բարձրորակ, ժամանակին, համապարփակ պլանավորումը և վերարտադրողական առողջության ծառայությունները հիմնարար են անհատների, ընտանիքների և համայնքների առողջության համար: Այս ուղեցույցը նկարագրում է Լոս Անջելեսի Շրջանում հասանելի աղբյուրները բոլոր նրանց համար, ում անհրաժեշտ է բուժօգնություն/խնամք հղիության ընդհատման, հակաբեղմնավորիչների օգտագործման կամ հարակից ծառայությունների դեպքում:

Այս ուղեցույցը պարբերաբար կթարմացվի՝ Շրջանի վերարտադրողական առողջության պահպանման ոլորտի փոփոխությունները արտացոլելու համար: Աղբյուրները այբբենական կարգով նշված են յուրաքանչյուր բաժնում:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հղիության ընդհատման դեպքում խնամքը հասանելի և մատչելի է Լոս Անջելեսի Շրջանում: Հղիության ընդհատման ծախսերը Կալիֆորնիայում փակվում են բժշկական ապահովագրությամբ, ներառյալ Medi-Cal-ի ապահովագրությունը: Հաշվի առեք, որ Կալիֆորնիայում բնակվող բոլոր ցածր եկամուտ ունեցող անձինք հղիության ընթացքում կարող են օգտվել Medi-Cal-ից՝ անկախ ներգաղթային կարգավիճակից: Հղիության ընդհատումը կարող է լինել դեղորայքային (դեղահաբեր) կամ հիվանդանոցում կատարվող միջամտությամբ՝ կախված հիվանդի նախապատվությունից, առողջական վիճակից ու կենսապայմաններից և հղիության փուլից (եռամսյակ):

Որոշ դեպքերում կանանց մասնավոր մանկաբարձ-գինեկոլոգները (OB-GYN) կամ բուժակները (practitioners/nurse) կարող են տրամադրել հղիության ընդհատման հետ կապված բուժօգնություն: Շատ դեպքերում հղիության ընդհատման ծառայություններն իրականացվում են այդ մասնագիտացված բուժօգնության համար վերապատրաստված մանկաբարձ-գինեկոլոգների (OB-GYN) կողմից:

Լոս Անջելեսի Շրջանում հղիության ընդհատում իրականացնողները ներառում են՝

Cedars Sinai | Family Planning Program
Սեդարս Սինայ |Ընտանիքի Պլանավորման Ծրագիր
https://www.cedars-sinai.org/programs/gynecology/clinical-programs/family-planning.html
310-423-9268 (բաց է երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան 8-ից ցերեկվա 4:30-ը):
Տեղում ծառայություններ մատուցող կլինիկա, որն առաջարկում է ընտանիքի պլանավորման բոլոր ծառայությունները, ինչպես նաև բժշկական և վիրաբուժական եղանակներով հղիության ընդհատման հետ կապված բուժօգնություն:

Choix
Չոյիս (Ընտրություն)
Նոր կայքէջ՝ www.choixhealth.com
858-203-0531 (Գործում է երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան 8:30-ից ցերեկվա 4:30-ը՝ արևմտյան ափի ժամանակով (PST))
Choix-ը հեռաբժշկության մասնավոր կլինիկա է, որն ապահովում է սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված բուժօգնություն Կալիֆորնիայում, Կոլորադոյում, Իլինոյսում, Նյու Մեքսիկոյում և Վիրջինիայում:

FPA Women's Health
Ընտանիքի Պլանավորման Միություն, Կանանց Առողջություն
https://www.fpawomenshealth.com/abortion
Զանգահարեք կամ տեքստային նամակ ուղարկեք հետևյալ համարով՝
877- 883-7264 (բաց է առավոտյան 8-ից երեկոյան 5-ը):
Հիվանդանոցային, առցանց և հեռաառողջապահական ծառայություններ տրամադրող կանանց առողջության պահպանման կլինիկա, որն ապահովում է գինեկոլոգիական, ծնելիության վերահսկման, հղիությունների ընդհատման ծառայություններ և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI) թեստավորում: Կալիֆորնիայում հասանելի են 25 կլինիկաներ:
https://www.fpawomenshealth.com/telehealth

Her Care
Հըր Քեյր (Նրա Խնամքը)
https://hercare.org/
213-516-8580
Ընտանիքի պլանավորման, կոսմետիկ վիրաբուժության և հղիության ընդհատման մասնավոր ծառայություններ 15-65 տարեկան կանանց համար Լոս Անջելեսի Շրջանի երեք վայրերում:

LA County Department of Health Services (DHS)
Լոս Անջելեսի Շրջանի Առողջապահական Ծառայությունների Վարչություն
https://dhs.lacounty.gov/
DHS-ը տրամադրում է վերարտադրողական առողջության համապարփակ ծառայություններ, ներառյալ նախահղիության առողջապահական ծառայություններ, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI) ստուգում, հակաբեղմնավորիչների ընդունման օգնություն և հղիության ընդհատման ծառայություններ:

Luna Flow
Լունա Ֆլոու
https://www.lunaflowhealth.com/
Կալիֆորնիայում մասնավոր բժշկական հղիության ընդհատում հեռաբժշկության միջոցով, մինչև 10 շաբաթական հղիության համար: Լոս Անջելեսի Շրջանում հասանելի են նաև անձամբ այցելելու ծառայությունները տեղի կլինիկայում:

My Choice Medical Center
Մայ Չոիս (Իմ Ընտրությունը) Բժշկական Կենտրոն
https://www.mychoicemedicalcenter.com/
866-397-3070 (այս թեժ գիծը հասանելի է օրը 24 ժամ):
Կլինիկաներ են գործում Լոս Անջելեսում և Վեն Նայսում առավոտյան 9-ից ցերեկվա 1-ը:
My Choice բժշկական կենտրոնը լիարժեք ծառայություններ տրամադրող մասնավոր բժշկական կենտրոն է, որն առաջարկում է հղիության ընդհատման ծառայություններ:

Planned Parenthood Los Angeles (PPLA)
Երեխաների Պլանավորումը Լոս Անջելեսում
https://www.plannedparenthood.org/planned-parenthood-los-angeles
800-576-5544
PPLA-ն տրամադրում է վերարտադրողական առողջության համապարփակ բուժօգնություն Լոս Անջելեսի Շրջանի համայնքներին:

Planned Parenthood Pasadena and San Gabriel Valley (PPPSGV)
Երեխաների Պլանավորումը Փասադենայում և Սան Գաբրիելում
https://www.plannedparenthood.org/planned-parenthood-pasadena-san-gabriel-valley/getcare
626-798-7938 կամ 626-798-0706
Planned Parenthood Pasadena & San Gabriel Valley-ն ապահովում է վերարտադրողական առողջության համապարփակ բուժօգնության ծառայություններ: Առանց նախօրոք ժամադրության, նույն օրը կամ տեսազանգով հանդիպումներ բժշկական մատակարարների հետ:

UCLA | OBGYN Division of Family Planning
UCLA | Մանկաբարձության և Գինեկոլոգիայի Ընտանիքի Պլանավորման Բաժին
https://www.uclahealth.org/obgyn/family-planning
Զանգերեք համակարգողին՝ 310-825-5961
(ժամերը՝ երկուշաբթիից հինգշաբթի՝ առավոտյան 8-ից երեկոյան 5-ը, ուրբաթ՝ առավոտյան 8-ից ցերեկվա 4:30-ը:)
Այս կլինիկան տրամադրում է վերարտադրողական առողջության համապարփակ ծառայություններ:

ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՄ ԳՏՆԵԼ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Կալիֆորնիա նահանգում հղիության ընդհատումը օրինական է և անվտանգ: Կալիֆորնիայում հղիության ընդհատումների դեպքում տրամադրվող բուժօգնությունը հասանելի է ցանկացած տարիքի բոլոր հղիներին՝ **անկախ ներգաղթային կարգավիճակից կամ բնակության վայրից:**

Հետևյալ ազգային կայքերն օգնում են այն մարդկանց, որոնք ցանկանում են ավելի շատ տեղեկավություն ստանալ այն մասին, թե որտեղ և ինչպես կարելի է կատարել հղիության ընդհատում:

Abortion Finder
Հղիության Ընդհատման Որոնիչ Կայք
https://www.abortionfinder.org/
Կայք, որը ներառում է առողջապահական ծառայություններ տրամադրող ավելի քան 700 կենտրոններ և հղիությունների ընդհատման ծառայությունների հաստատված մատուցողների համապարփակ ցանկ:

ACCESS Reproductive Justice
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ Վերարտադրողական Արդարադատությանը
https://accessrj.org/
800-376-4636 (գործում է երկուշաբթիից հինգշաբթի՝ առավոտյան 10-ից ցերեկվա 4-ը)
Զանգի միջոցով (անգլերեն և իսպաներեն) տրամադրվում են անվճար և գաղտնի տեղեկություններ, ուղղորդումներ, շահերի պաշտպանություն և խորհրդատվություն վերարտադրողական և սեռական առողջության բազմաթիվ խնդիրների, ինչպես նաև հղիության և հղիությունների ընդհատման տարբերակների վերաբերյալ:

AID Access
ՕԳՆՈՒԹՅԱՆ Հասանելիություն
https://aidaccess.org/
Օգնության հասանելիությունՆ աշխատում է՝ բարելավելու այն կանանց առողջական վիճակը և մարդու իրավունքները, ովքեր չեն կարող օգտվել հղիության արհեստական ընդհատման տեղական ծառայություններից:

American College of Obstetricians and Gynecologists (ACOG)
Մանկաբարձների և Գինեկոլոգների Ամերիկյան Քոլեջ
https://www.acog.org/womens-health/faqs/induced-abortion
Հուսալի, ապացույցների վրա հիմնված առողջապահական տեղեկատվություն, որը կենտրոնանում է կանանց առողջության վրա:

California Abortion Access
Հղիության Արհեստական Ընդհատմանը Կալիֆորնիայում
https://abortion.ca.gov/
Կալիֆորնիայի նահանգի այս կայքը նշում է ընթացիկ և ճշգրիտ տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարող եք օգտվել Կալիֆորնիայում հղիության արհեստական ընդհատման ծառայություններից:

Hey Jane
Հեյ Ջեյն
https://www.heyjane.co/
Տեքստային նամակների հեռախոսահամար՝ 405-643-7957
Վիրտուալ կլինիկա, որը ձեր տուն է մատակարարում հղիության ընդհատման դեղահաբեր:

INeedAnA
ԱյՆիդանԷյ (Ես կարիք ունեմ որևէ)
https://www.ineedana.com/
“I Need an A”-ն անգլերեն և իսպաներեն լեզուներով առցանց ինտերակտիվ հարթակ է, որն օգնում է օգտատերերին գտնել աղբյուրներ և կլինիկաներ իրենց տարածքում կամ իրենց նախընտրած փոստային դասիչով (zip code):

Miscarriage + Abortion Hotline
Վիժումների + Հղիության Արհեստական Ընդհատման Թեժ Գիծ
https://www.mahotline.org/
833-246-2632 (առավոտյան 5-ից երեկոյան 11-ը)
Տնից գտեք գաղտնի աջակցություն և ինքնուրույն կառավարեք ձեր վիժումը կամ հղիության արհեստական ընդհատումը: Զանգահարեք կամ գրեք վիժումների և հղիության արհեստական ընդհատումների ժամանակ խնամք տրամադրող՝ տարիների փորձ ունեցող բժիշկներին:

National Abortion Federation
Ընդհատման Ազգային Միություն
https://prochoice.org/patients/find-a-provider/
Առցանց ինտերակտիվ քարտեզ՝ ձեր մոտակայքում ծառայություն տրամադրող գտնելու համար (ԱՄՆ, Մեքսիկա, Կանադա): Հղիությունների ընդհատման և այլ աղբյուրների, ներառյալ ֆինանսական օգնության մասին տեղեկությունների համար զանգահարեք 1-800-772-9100 հեռախոսահամարով:

(Plan C)
Ծրագիր Գ
https://www.plancpills.org/
Plan C-ն տրամադրում է ընթացիկ տեղեկատվություն անգլերենով և իսպաներենով՝ օգնելու ԱՄՆ-ում ապրող մարդկանց առցանց ձեռք բերել դեղահաբեր՝ տնային պայմաններում հղիության ընդհատման համար:

Women's Health Specialists
Կանանց Առողջության Մասնագետներ
https://www.womenshealthspecialists.org/
800-714-8151 (բաց է երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:30-ից երեկոյան 5:00-ը)
Այս աղբյուրը տրամադրում է վերարտադրողական առողջության հետ կապված աջակցություն, կրթություն և ծառայություններ:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ: ԶԳՈՒՇԱՑԵՔ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇՈՂ ԳՈՎԱԶԴՆԵՐԻՑ

Հղիության Ճգնաժամային Կենտրոնները (Crisis Pregnancy Centers, CPC), որոնք հայտնի են նաև որպես Հղիության Աղբյուրների Կենտրոններ, մասնավոր կառավարմամբ կենտրոններ են, որոնք նման են առողջապահական կլինիկաների, սակայն անձնակազմի անդամները հաճախ բուժաշխատողներ չեն: Կալիֆորնիայում և ամբողջ երկրում դրանք ավելի տարածված են, քան հղիության ընդհատում իրականացնող կլինիկաները: Դրանք հաճախ տեղակայված են հղիության ընդհատում իրականացնող իրական կլինիկաներին շատ մոտ: Երբ առցանց են, հեշտ է կարծել, որ դրանք հղիության ընդհատումներ իրականացնող կլինիկաներ են, եթե չկարդաք մանր տառերով գրվածքը:

CPC-ները սովորաբար ղեկավարվում են կրոնական կազմակերպությունների կողմից և առաջարկում են հղիության թեստերի անցկացում, ուլտրաձայնային հետազոտություններ և պարագաներ հղի ծնողների և նորածինների համար՝ անվճար կամ դասընթացների հաճախելու դիմաց: Կալիֆորնիայի որոշ CPC-ներ առաջարկում են ավելի համապարփակ առողջապահական ծառայություններ: Այնուամենայնիվ, հիվանդներին հղիության ընդհատման մասին ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու փոխարեն, որպեսզի մարդիկ կարողանան ինքնուրույն որոշումներ կայացնել, նրանց նպատակն է ետ պահել կանանց հղիության արհեստական ընդհատում կատարելուց: CPC-ները ԱՄՆ-ում հաճախ հաճախորդներին տրամադրում են կեղծ բժշկական տեղեկատվություն:

Հնարավոր է դժվարանալ հասկանալ՝ արդյոք հատկապես այդ կլինիկան բժշկական կլինիկա է, թե CPC, հետևաբար, եթե դիտարկում եք հղիության արհեստական ընդհատումը և ցանկանում եք ստանալ բարձրորակ, բժշկական տեսանկյունից ճշգրիտ խորհրդատվություն կամ բուժօգնություն, անպայման դիմեք հայտնի, արտոնագրված բժշկական կենտրոն, ինչպես օրինակ այս աղբյուրում թվարկված կենտրոններից մեկը:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Կալիֆորնիայի նահանգում հղիության ընդհատման ծախսերը փակվում են բժշկական ապահովագրությամբ, ներառյալ ցածր եկամուտ ունեցող մարդկանց տրամադրվող Medi-Cal-ի միջոցով: Յուրաքանչյուր հղի կարող է դիմել Medi-Cal-ի համար՝ անկախ ներգաղթային կարգավիճակից (լրացուցիչ տեղեկությունների համար ստորև տե՛ս *Medi-Cal-ի Ապահովագրություն* բաժինը):

Հղիության ընդհատումը հաճախ ներառում է բուժօգնության ծախսերից բացի այլ ծախսեր ևս: Հղիությունների ընդհատման հիմնադրամները կարող են օգնել հոգալ այդ ծախսերը կամ վճարել փոխադրման, կացարանի և երեխայի խնամքի, ինչպես նաև հղիության ընդհատման ծախսերը (ինչպես Կալիֆորնիայի բնակիչների, այնպես էլ այլ նահանգներից եկած մարդկանց համար):

ACCESS Reproductive Justice
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ Վերարտադրողական Արդարադատությանը
https://accessrj.org/
800-376-4636 (գործում է երկուշաբթիից հինգշաբթի՝ առավոտյան 10-ից ցերեկվա 4-ը)
Տրամադրվում են անվճար և գաղտնի տեղեկություններ, ուղղորդումներ, շահերի պաշտպանություն և խորհրդատվություն վերարտադրողական և սեռական առողջության բազմաթիվ խնդիրների, ինչպես նաև հղիության և հղիության ընդհատման տարբերակների վերաբերյալ:

Medi-Cal Ապահովագրություն
Medi-Cal-ը Կալիֆորնիայի բժշկական ապահովագրությունն է՝ նախատեսված ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար: Դուք կարող եք դիմել Medi-Cal-ի նպաստների համար, եթե 50 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի՝ անկախ սեռից, ռասայից, կրոնից, մաշկի գույնից, ազգային պատկանելիությունից, սեռական կողմնորոշումից, ամուսնական կարգավիճակից, տարիքից, հաշմանդամությունից, վետերանի կամ ներգաղթի կարգավիճակից:

- **Սահմանափակ Medi-Cal-ը (միայն շտապ օգնության և հղիության ծառայություններ) և Հղիության Հետ Կապված Medi-Cal-ը փակում են հղիության, ծննդյան, վիժման կամ հղիության ընդհատման բժշկական պահանջները, և հղիությանը հաջորդող 12 ամիսների ընթացքում բուժօգնությունը՝ անկախ ներգաղթի կարգավիճակից:** Լրացուցիչ տեղեկությունների համար՝ https://www.mchaccess.org/pdfs/alerts/Access%20full%20Medi-Cal%20benefits%20during%20pregnancy%20and%2012%20months%20after%205-1-22.docx.pdf
- **Medi-Cal-ի Ոչ-Բժշկական Փոխադրման Նպաստ (NMT)**: NMT-ը դեպի Medi-Cal-ի կողմից վճարվող ծառայություններ և հակառակ ուղղությամբ փոխադրումն է: Medi-Cal-ում գրանցված բոլոր մարդիկ կարող են օգտվել այս ծառայությունից, ներառյալ հղի անձինք՝ մինչև հղիությունից հետո 12-ամսյա շրջանի ավարտը՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝

https://www.mchaccess.org/pdfs/alerts/NMT%20Consumer%20Flyer%20Updated%20-1-14-21%20-%20English%20and%20Spanish.pdf

National Network of Abortion Funds
Հղիությունների Ընդհատման Հիմնադրամների Ազգային Ցանց
https://abortionfunds.org/
Հղիությունների Ընդհատման Հիմնադրամների Ազգային Ցանցը կապ է հաստատում օգտատերերի և այն կազմակերպությունների միջև, որոնք կարող են աջակցել ֆինանսական և փոխադրման հարցերում, եթե կանայք ծրագրում են հղիության ընդհատում:

Women's Health Specialists
Կանանց Առողջության Մասնագետներ
https://www.womenshealthspecialists.org/
800-714-8151 (գործում է երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:30-ից երեկոյան 5:00-ը)
Այս աղբյուրը տրամադրում է վերարտադրողական առողջության հետ կապված աջակցություն, կրթություն և ծառայություններ:

Women's Reproductive Rights Assistance Fund (WRRAP)
Կանանց Վերարտադրողական Իրավունքների Աջակցության Հիմնադրամ
https://wrrap.org/
WRRAP-ն անմիջապես համագործակցում է ավելի քան 700 բժիշկների, կլինիկաների և հիվանդանոցների հետ (ոչ թե հիվանդների)՝ ամբողջ ԱՄՆ-ում, ներառյալ Կալիֆորնիայում և Լոս Անջելեսի Շրջանում կանանց հղիությունների ընդհատումները, դեղորայքային և վիրաբուժական եղանակներով հղիությունների ընդհատումները ֆինանսավորելու համար: Կապ հաստատեք նրանց հետ ձեր կլինիկայի կամ բժշկի միջոցով:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԿԱՐՈՂ ԵՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐԻՉ ՀԱԲԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

Community Clinic Association of LA County (CCALAC)
Լոս Անջելեսի Շրջանի Համայնքային Կլինիկաների Միություն
CCALAC-ը ներկայացնում է համայնքային ոչ առևտրային կլինիկաներ և առողջապահական կենտրոններ, որոնք ունեն առաջնային բժշկական խնամքի կենտրոններ ամբողջ շրջանում: Համայնքային կլինիկաները տրամադրում են առաջնային առողջապահական, ներառյալ բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջության ծառայություններ և հակաբեղմնավորիչներ ապահովագրություն չունեցող, բավարար ապահովագրություն չունեցող և բավարար միջոցներ չունեցող բնակչությանը:
Ձեր մոտակայքում կլինիկա գտնելու համար՝ https://ccalac.org/find-a-clinic/:

Family PACT Providers
Ընտանիքի Պլանավորման, Օգնության, Խնամքի և Բուժման Մատակարարներ
Family PACT-ը տրամադրում է ընտանիքի պլանավորման համապարփակ ծառայություններ Կալիֆորնիայում ցածր եկամուտ ունեցող տղամարդկանց և կանանց:
Ձեր մոտակայքում Family PACT-ի մատակարար կարող եք գտնել այստեղ՝
https://familypact.org/provider-search/

Federally Qualified Health Centers (FQHCs)
Դաշնության Կողմից Որակավորված Առողջության Կենտրոններ
Դաշնության Կողմից Որակավորված Առողջության Կենտրոնները համայնքային առողջապահական ծառայությունների մատակարարներ են, որոնք տրամադրում են առաջնային բժշկական ծառայություններ անապահով բնակչությամբ տարածքներում:
FQHC-ները կտրամադրեն բուժօգնություն բժշկական ապահովագրություն ունենալու կամ չունենալու դեպքում:
Ձեր մոտակայքում կլինիկա կարող եք գտնել այստեղ՝
https://findahealthcenter.hrsa.gov/

Los Angeles County Department of Health Services, Women's Health Services
Լոս Անջելեսի Շրջանի Առողջապահական Ծառայությունների Վարչություն, Կանանց Առողջության Ծառայություններ
Այս ծրագիրը տրամադրում է բժշկական տեղեկատվության, խորհրդատվության և ընտանիքի պլանավորման ծառայություններ ցածր եկամուտ ունեցող չափահասներին և դեռահասներին՝ չպլանավորված հղիության հավանականությունը նվազեցնելու և վերարտադրողական առողջությունը պահպանելու համար:
Ձեր մոտակայքում բուժօգնություն/խնամք կարող եք փնտրել այստեղ՝
https://dhs.lacounty.gov/womens-health/our-services/womens-health/

Title X Family Planning Clinic Locator
Title X՝ Ընտանիքի Պլանավորման Կլինիկայի Տեղորոշիչ
Title X-ը դաշնային ֆինանսավորում է, որով տրամադրվում է ընտանիքի պլանավորման միջոցների և հարակից կանխարգելիչ առողջապահական ծառայությունների լայն շրջանակ: Գտեք ընտանիքի պլանավորման համապարփակ կլինիկաներ, որոնք պատանիներին /երիտասարդներին և ցածր եկամուտ ունեցող մարդկանց առաջարկում են ծննդյան հսկողություն, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI) հետ կապված ծառայություններ, հղիության թեստերի անցկացում և հղիության ընդհատման տարբերակների վերաբերյալ խորհրդատվություն և քաղցկեղի հետազոտություններ:
Ձեր մոտակայքում կլինիկա կարող եք գտնել այստեղ՝ https://opa-fpclinicdb.hhs.gov/:

ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ABORTION DOULA SUPPORT)

Եթե դուք պատրաստվում եք ընդհատել հղիությունը, կամ վերջերս եք ընդհատել և կցանկանաք լրացուցիչ աջակցություն այդ գործընթացի ընթացքում, դիտարկեք այն խնամքը, որը կարող են տրամադրել հղիության ընդհատման մանկաբարձները: Հղիության արհեստական ընդհատման մանկաբարձները և այլ հատուկ պատրաստվածություն ունեցող անձինք կարող են տրամադրել հուզական և ֆիզիկական աջակցություն՝ հիվանդանոցում կամ տանը հղիության ընդհատումից առաջ, ընթացքում և հետո: Հղիության ընդհատման մանկաբարձները կարող են ձեզ աջակցել մի քանի եղանակներով՝ ձեր առաջիկա հղիության ընդհատման մասին ձեզ գիտելիք տալով, կլինիկայում գտնվելու ընթացքում ձեր ձեռքը բռնելով, ցավի մեղմացման համար ձեզ խորհուրդներ տալով, ձեր ուշադրությունը շեղելով կամ այդ միջամտության ընթացքում առաջացող զգացմունքների մասին խոսելով: Ի վերջո, այս բարձր պատրաստվածություն ունեցող, կարեկցող անձնավորությունը պատրաստ է ձեզ աջակցել և հարգել ձեր վերարտադրողական ինքնուրույնությունը անհատական մոտեցմամբ, որը ծառայում է ձեր յուրահատուկ կարիքներին:

LA Abortion Support Collective
Լոս Անջելեսում Հղիությունների Ընդհատման Աջակցության Անձնակազմ
https://www.laabortionsupport.org/

- Տրամադրում է տեղեկատվություն Լոս Անջելեսի Շրջանում անձամբ այցելությամբ և առցանց աջակցության անվճար տարբերակների մասին:

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շատ մարդկանց անհրաժեշտ է աջակցություն՝ որոշելու, թե ինչ անել հղիանալու դեպքում, եթե չեն ցանկանում հղիանալ, կամ վստահ չեն, որ ցանկանում են հղիությունը մինչև վերջ շարունակել: Թեև տասնամյակների հետազոտություններն ապացուցել են, որ հղիության արհեստական ընդհատումը չի ունենում բացասական հետևանքներ ֆիզիկական կամ հոգեկան առողջության վրա, որոշ մարդկանց դեպքում բնական է հղիությունն ավարտելուց առաջ կամ հետո տխուր կամ զգացմունքային լինելը: Այս աղբյուրները նախատեսված են նրանց համար, ովքեր ցանկանում են ընդհատել, ընդհատել են հղիությունը կամ աջակցում են հղիությունն ընդհատած անձի:

(All-Options Talk-line)
Հղիության Ընդհատման Բոլոր Տարբերակների Համար Զրույցի Ծառայություն
https://www.all-options.org/find-support/talkline/
888-493-0092
Երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 10-ից ցերեկվա 1-ը, շաբաթ և կիրակի՝ առավոտյան 10-ից երեկոյան 6-ը՝ արևմտյան ափի ժամանակով (EST):
Բժշկական տեսանկյունից ճշգրիտ, անաչառ խորհրդատվություն՝ կապված հղիության ընդհատման տարբերակների հետ

Exhale Pro-Voice
Էկսհեիլ Պրո-Վոիս
https://exhaleprovoice.org/
Հեռախոսահամար տեքստային նամակների համար՝ 617-749-2948 (երկուշաբթիից ուրբաթ՝ ցերեկվա 3-ից երեկոյան 9-ը, շաբաթ՝ ցերեկվա 1-ից երեկոյան 9-ը, կիրակի՝ ցերեկվա 3-ից երեկոյան 7-ը)
Exhale Pro-Voice-ը հղիության ընդհատում կատարած անձանց և նրանց, ովքեր ցանկանում են աջակցել զուգընկերոջը, երեխային կամ ընկերոջը հղիության ընդհատումից հետո, տրամադրում է հղիության ընդհատմանը հաջորդող աջակցություն առանց քննադատությունների:

Faith Aloud
Ֆեյթ Ալաուդ (Հավատքի Վրա Հիմնված, Առանց Քննադատությունների Աջակցություն)
https://www.faithaloud.org/
888-717-5010
Զանգահարեք՝ միանալու հղիության ընդհատման եղանակների և հղիության դեպքում տրամադրվող կարեկից կրոնական և հոգևոր աջակցությանը:
Հոգևորականներն ու կրոնական խորհրդականները կլսեն և աջակցություն կառաջարկեն առանց քննադատելու:

Վիժումների + Հղիությունների Ընդհատման Թեժ գիծ
https://www.mahotline.org/
833-246-2632 (առավոտյան 5-ից – երեկոյան 11-ը)
Գտեք գաղտնի աջակցություն և ինքնուրույն կառավարեք ձեր վիժումը կամ հղիության ընդհատումը: Զանգահարեք կամ գրեք վիժումների և հղիությունների ընդհատման տարիների փորձ ունեցող բժիշկներին:

Reprocare Healthline
Ռեպրոքեյր Առողջության Կապի Գիծ
https://abortionhotline.org/
833-226-7821
Տրամադրվում է անանուն ընկերական հուզական աջակցություն, բժշկական տեղեկատվություն և ուղղորդումներ այն մարդկանց, որոնք տնային պայմաններում կատարում են հղիության դողորայքային ընդհատում:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ ՀՂԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ACLU Southern California
Հարավային Կալիֆորնիայի՝ Ամերիկյան Քաղաքացիական Ազատությունների Միություն
https://www.aclusocal.org/en/know-your-rights/abortion-care-california
Հարավային Կալիֆորնիայի ACLU-ն տրամադրում է տեղեկատվություն Կալիֆորնիայում հղիությունների ընդհատման հետ կապված իրավունքների մասին: Այս էջը պարբերաբար թարմացվում է՝ օրենքների փոփոխությանը զուգահեռ: Պատանիների համար՝ https://www.aclusocal.org/know-your-rights/abortion-care-california#minors

Advocates for Youth - Free the Pill
Պատանիների / Երիտասարդների Պաշտպաններ - Անվճար Հաբեր
https://www.advocatesforyouth.org/freethepill/
202-419-3420
Երիտասարդների Պաշտպաններ կազմակերպությունն աշխատում է հազարավոր պատանիների /երիտասարդների կողքին այստեղ՝ ԱՄՆ-ում և ամբողջ աշխարհում՝ պայքարելով սեռական առողջության, իրավունքների և արդարության համար:

California Consumer Alert: Right to Access Free or Low-Cost Birth Control
Կալիֆորնիայի Սպառողների Նախազգուշացում. Ծնելիության Վերահսկման Անվճար Կամ Մատչելի Հասանելիության Իրավունք
Սպառողների համար ահազանգի պատճենը հասանելի է այստեղ
Եթե դուք Կալիֆորնիայի բնակիչ եք, դուք ունեք անվճար կամ ծնելիության վերահսկման մատչելի տարբերակներ՝ անկախ ներգաղթի կարգավիճակից:

Teen Source
Աղբյուր Դեռահասների Համար

https://www.teensource.org/know-your-rights
Teen Source-ը դեռահասների համար սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ տեղեկատվության և աղբյուրների առցանց հարթակ է: Ներկայացնում է ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների (STDs), ծնելիության վերահսկման, առողջ հարաբերությունների և Կալիֆորնիայում կարևոր ծառայություններից օգտվելու դեռահասների իրավունքների վերաբերյալ (օրինակ՝ սեռական առողջության հետ կապված ծառայություններ):